ԱՐՓԻՆԵ ՌՈՒԲԻԿԻ ԲԱԲԼՈՒՄՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 12.08.1976

Ծննդավայր՝ ՀՀ, քաղաք Երևան

Պատմական գիտությունների թեկնածու **Արփինե Ռուբիկի Բաբլումյանը** Երևանում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1993 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, որն ավարտել է 1998 թ.: 2008 թ. ավարտել է ՀՀ ԳԱԱ ասպիրանտուրան, 2012 թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն՝ «Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի վերջերին - XX դարի սկզբներին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» թեմայով:

Ա. Բաբլումյանը 1999 թ. աշխատանքի է ընդունվել ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող, այնուհետև նշանակվել է գլխավոր ֆոնդապահ: 2008-2016 թթ. աշխատել է որպես ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի թանգարանագիտական գծով փոխտնօրեն: 2016 թ. հունվարից աշխատում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնում որպես ավագ գիտաշխատող:

Ա. Բաբլումյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայոց նոր և նորագույն ժամանակաշրջանի պատմության տարբեր հիմնախնդիրները՝ Հայոց ցեղասպանության պատմություն, Արևմտյան Հայաստանի ժողովրդագրություն, միջազգային մամուլի արձագանքը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին և այլն:

Ա. Բաբլումյանը հեղինակ է մեկ մենագրության, շուրջ 40 գիտական հոդվածների, որոնցից 2-ը ընդգրկված են ՄԳՇ (Scopus/Web of Science, Q1) շտեմարաններում, համահեղինակ է 2 նյութերի ժողովածուի:

Ա. Բաբլումյանը գիտական զեկուցումներով և ելույթներով հանդես է եկել հանրապետական և միջազգային գիտաժողովներում, կլոր սեղաններում, գիտագործնական սեմինարներում: Ա. Բաբլումյանը պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ և «Կրթամշակութային, աշխատանքային, միջազգային ծրագրերի փոխանակման ընկերակցություն» հասարակական կազմակերպության գովեստագրով, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի շնորհակալագրով:

Ա. Բաբլումյանը կուսակցական չէ, ամուսնացած է, ունի երկու դուստր: